ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/845 «02» 08 2023 թ.

«ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ի
տնօրեն Դ. Պետրոսյանին
Հասցե՝ Արարատի մարզ, գ. Ոստան, Արարատյան 80
Էլ. Փոստ՝ davagiv@mail.ru
ՀՎՀՀ՝ 47815982
Հեռ. +37496595010

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարությունը (նախկին ԱԻՆ, այսուհետ՝ Գնորդ) և «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 28.04.2023 թվականին կնքված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/46-1 ծածկագրով <ջրի բաքերի> ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ն (այսուհետ՝ վաճառող) չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ վերոգրյալ պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում մատակարարը մինչև 28.05.2023 թվականը մատակարարման վերջնաժամկետով գնորդին պետք է հանձներ թվով 11 (տասնմեկ) հատ ջրի բաքեր, որոնք չեն մատակարարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.1 կետի և 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագով սահմանված պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և

Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը (նախկին ԱԻՆ) և «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ–ի միջև 28.04.2023 թվականին կնքված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/46-1 ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ին առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 6.3 կետերով նախատեսված տուգանք՝ 2420 /երկու հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, պայմանագրի 6.2 կետերով նախատեսված տույժ (23 աշխատանքային օր)՝ 5566 /հինգ հազար հինգ հարյուր վաթսունվեց/ ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի ապահովում /48400 /քառասունութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ// և որակավորման ապահովում /72600 /յոթանասուներկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ//, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով:

«ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ. 010596039/:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Աբասյան
Հեռ.՝ 010-59-68-57